



110. ՇԱՇ ՏՂԵՆ

Մի գեղացի մի խելքապակաս տղա յա ունենում:

Դրան մի օր ասում ա թե.— Ֆողի եխումը խամ կա, գնա վարի:

Դա գնում ա, մի քիչ վարելուց եղը, մին էլ շութն ընգնում ա մի փոս, հանում ա, տենում մի կճուճ լիքը անգին քար: Մտածում ա, որ էդ իրանց հարմար չի, թաքավորի լայնդական ա, իրանք քասիթ են: Էդ հուզրումը տենում ա թաքավորի նազիր-վեզրնին գնում են:

Կանչում ա, թե.— Հլա էկեք ըստի:

Մինչի նրանց գալը փոշմանում ա, մտքումն ասում ա.— Էնա ես կըտանեմ թաքավորին էլի, խի՞ սրանց կտամ:

Թաքավորի մարթիկ գալիս են, հարցնում: Տղա, ի՞նչ ես ասում:

Դա թե.— Էս եզը, էս եղան ի՞նչը կլի:

Դրանք ասում են թե.— Կամ ախպերը կլի, կամ մոքրի տղեն, մենք ի՞նչ գիդենք:

Ասում են ու թողում գնում:

Րիգունը էդ շաշը գալիս ա տուն ու հորն ասում.— Այ հեր, անգինք քար եմ գդել, տանում եմ թաքավորին տամ:

Հերը համաձայնվում չի, համա տղեն իրա ասածը պնդում ա, որ տանիլ տի:

Հերը տղին ասում ա.— Դե լավ, եղնիքը տար ջուրն ու արի տար, ես էլ կճճի բերանը կապեմ:

Մինչի տղի գալը, հերը անգին քարերը դրդակըմ ա, կճճի մեջը քար լքցնըմ ու բերանը կապըմ:

Տղեն գալիս ա տուն, կճուճը վեր ունըմ, ուրախ ուրախ գնըմ թաքավորի պալատը: Գնըմ ա խնամխոսի քարի վրա նստըմ:

— Թաքավորի հըմա նվեր եմ բերըմ, ասեք թողա տուն բերեմ:

Թաքավորն ասըմ ա.— Թողեք գա:

Գնըմ ա պալատը, ըստուլի վրա հայլի ա ըլըմ, քարը շուռ ա տալի դրա վրա ու ջարթըմ:

Թաքավորի հրամանն էլ հրաման ա, դրան տանըմ են մի օթախ գձըմ:

Թաքավորն իրա ծառաներին ասըմ ա.— Գնացեք տեհեք ինչ բանի ա, դա անպայման խելագար կլի:

Գնըմ են, գալի թաքավորին ասըմ, թե իրա հըմա շափ ու ձև ա անըմ ձեռով:

Թաքավորը կանչիլ ա տալի իրա կուշտը ու հարցնըմ.— Այ տղա, ի՞նչ իր շափ ու ձև անըմ:

Դա թե.— Մտածըմ ի, թե թաքավորը ըսքան մենձ, ոնց ա իրա մորիցը էլել:

Թաքավորը նորից շղայնանըմ ա ու հրամայըմ, որ գցեն մաքրաքն ու մուխ տան, բալքի խելքը գլուխը գա: Թհենց էլ անըմ են:

Թաքավորը ծառաներին ասըմ ա.— Գնացեք տեհեք ի՞նչ բանի ա:

Գնըմ են գալի, թե.— Թաքավորն ապրած կենա, էս պատովն ա դիպըմ, էն պատովն ա դիպըմ, իրան-իրան խոսըմ ա:

Թաքավորը հլեդ կանչիլ ա տալի ու հարցնըմ.— Այ տղա, էն ի՞նչ իր ասըմ, ի՞նչ բանի իր:

Դա թե.— Թաքավորն ապրած կենա, դրմանի ծուխը խելատեց, կեղտ ի կերել լավ էր, քան թհենց ծխի մեջն արել: Բա գու թաքավոր, գիդես ո՞չ, որ ծուխը մարդ կխելատի:

Թաքավորն ասըմ ա.— էս խելագարին հետ ածեք, գնա: Տղեն մահից ազատվըմ ա ու գնըմ իրա արևի ձենն ա ածըմ:

